

Հասմիկ Մարիկյան, ք. գ. թ.
ՇՀՀԿ/ՇՊՀ

ՕՐՈՐՈՑԻ ԼԵԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՅԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Օրորոց... դա առաջին դպրոցն է մարդկանց որդիների.
օրորոցի երգ, դա առաջին դասն է,
որ մայրերը խոսում են իրանց երեխաների ականջներին:
Օրորոցից պարբերաբար է մարդս լինել մարդ
այդ բառի բազմախորհուրդ նշանակությամբ:*

Բաֆֆի

Օրորոց/օրոցք հասկացությունը, արմատավորված լինելով ժողովրդական գիտակցության մեջ, հանդես է գալիս ինչպես բանահյուսական մակարդակում՝ օրինանք-մաղթանքներում, անեծքներում, առած-ասացվածքներում, դարձվածքային կապակցություններում, այնպես էլ գրական միջավայրում (հեղինակային ստեղծագործություններում):

Ուշագրավ է, որ *օրորոց* բաղադրիչով ցանկության բանաձևերը հեղինակային երկերում նույնպես ընդգրկուն են. *օրոցք* բաղադրիչը պարունակող հեղինակային տեքստերում տեսնում ենք բանահյուսական նյութի խառնված:

Օրորոցը՝ որպես մանկաշխարհի բաղկացուցիչ, ունի պատկերավոր նկարագիր թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային ստեղծագործություններում: Հոդվածում ներկայացնելու ենք օրորոցի պատկերը՝ կատարելով *օրորոց* բառանվան լեզվաքննություն և տեքստային ատաղձի ուսումնասիրություն. առանցքում են լինելու նաև բանահյուսական օրորերգերը: Պատմական հիշողության դարձով վկայաբերել ենք նաև օրորոցի պատկեր-նկարագիրը:

Օրորոցի լեզվական և մշակութային ուսումնասիրությունները հատուկ մեկնություն են ստանում լեզվական տարբեր միջավայրերի համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը պայմանավորված է առաջադրված նպատակով: Ընտրվել են միջտեքստային գուգադրական վերլուծության և հարցման մեթոդները:

Հիմնաբառեր¹՝ օրորոց, լեզվական, մշակույթ, օրորոցային, պատկեր, բանասաց, տեքստ:

Օրորոցը մանկանոցի առանցքային բաղադրիչ

Օրորոց բառանունը բառարանային մեկնությամբ ունի տարրդրական սահմանում ու հոմանիշային հարուստ հարացույց: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» *օրորոց* բառին համարժեք *օրրան*, *օրորան*, *որրան*, *օրոցք* (*բրբ*) բառերն են կիրարկվում¹: Ա. Սուքիասյանի հոմանիշների

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 809:

բառարանում օրորոց բառի տարածքային տարբերակներն են՝ *հակորճի*, *քնարան*, *լմշյոց*, *դարդար*, *ճորր* (բրբ)²:

Օրոր արմատը կենսունակորեն կարող է մասնակցել և՛ բառաբարդումների, և՛ բառածանցումների կազմության ժամանակ՝ հաճախ դառնալով բարդ ածանցավոր բառ (օրորոցագող, օրորոցահազ):

Ժողովրդական մտածողությունը, հենվելով հավատալիքների վրա, երբեմն ստեղծում է բառային միավորներ՝ երևույթով ու ավանդական կենցաղով պայմանավորված: Բանահյուսական օրորներում հաճախ ընդգծվում է աղջիկ երեխայի գովքը՝ կտրիճ նշանած ունենալու իրողությունը դեռևս օրոցքից. «Օրոր ըսեմ, քոն ունի,/ Էսման աղջիկ վո՛վ ունի,/ Զոր-զարդարանք շար ունի/ Բմբուլ կակոռ թարձ ունի/ Կրտրիճ նշանած ունի/...»³:

Գրական միջավայրում ազգագրական պատկերը ավելի է խտանում: Այս առումով նշենք Ե. Լավայանի խոսքերը՝ օրորոցախազ երևույթին առնչվող. «Այս սովորությունը հնումը եղել է Վան քաղաքում, և այժմ էլ պարսիսում է գիւղերում. Երկու գերդասարաններ, որ միմեանց սէր, յարգանք են րածում, ցանկանալով իրենց սէրը բարեկամական կապով շաղկապել, ուխտում են իրենց զաւակներին միմեանց րալ, և այս նպատակով էլ նրանց օրորոցների վրայ խազ են քաշում, իբրև նշան նշանադրութեան: Երբեմն պարսիսում է, որ այս ուխտը անում են դեռ երեխաները չծնուած»⁴:

«Մերձ ամուսնությունները այդ ժամանակ սովորական էին Հայաստանում, մանավանդ քարձր շրջաններում: Սովորական էր նույնպես, ոչ միայն անչափահաս հասակում նշան դնել ամուսնացողներին, այլև օրորոցի մեջ, և մինչև անգամ դեռ չծնված»⁵:

Մեկ այլ առիթով Բաֆֆին գրում է. «Մեխակը և Ալմասրը ծնվել էին իրանց մայրերից մի օրում և մի ժամում: Դեռ նրանց ականջները չէին լսել առաջին ձայնն օրորոցի երգի, երբ նորածինների ծնողքը վճռեցին նրանց ապագան-նրանք օրհնեցին Ալմասրի և Մեխակի ամուսնական նշանադրությունը: Երեխաների օրորոցի դասարակից քարշ էին րված ուլունքներով զարդարված խաղալիքների մի-մի շարք, որոնց մեջ անցուդարձ էին մի-մի հար մարանի: Այդ մարանիներն էին նշաններ նրանց ծնողաց ուխտադրությանը: Պառավ րարը շարժում էր օրորոցը և մեղմիկ ձայնով նանիկ էր կարդում, երեխայքը խաղում էին մարանիների հետ, մինչև անուշիկ քունը հանգարացնում էր նրանց: ...Երեխայքը մեծանում են: Մարանիներն օրորոցի խաղալիքի դառնում են նրանց մարների զարդարանք, մինչև պարանին և օրիորդը հասկանում են նրանց նշանակությունը, հասկանում են, և սիրում են միմյանց»⁶:

² Սուքիասյան 1967, 682:

³ Գրիգորյան 1970, 87:

⁴ Լավայեան 1910, 144:

⁵ Բաֆֆի 1963, 117:

⁶ Բաֆֆի 1962, 400:

Օրորոցը երեխայի առաջին հանգրվանն է՝ մի գոդտրիկ ու խորհրդավոր անկյուն, որտեղ նա ապահով է զգում. օրորոցում են ձևավորվում լույս աշխարհ եկած նորածնի հոգեզգայական աշխարհը, միտքը, լեզվագեղագիտական ճաշակը նն: Օրորասաց մայրը օրորոցում գտնվող երեխային իր ասելիքն է հաղորդում, խոհերն է պատմում երգով:

Մանուկների կյանքում երգերի դերակատարության մասին Կոմիտասն արտահայտվում է 1912 թ. մի դասախոսության մեջ. *«Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է... Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողության ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը»*⁷:

Օրորոցային երգերում առկա են մշակութային տարրեր, որոնց իմաստն աշխարհի տարածական կոորդինատների սիմվոլիկ պատկերացումն է, որտեղ մուտք է գործում երեխան լույս աշխարհ գալուց հետո: Տարածության կառուցումը սկսվում է այն կետից, որտեղ գտնվում է երեխան⁸: Օրորոցային երգերում շատ հաճախ իրատեսորեն նկարագրվում է օրորոցը՝ որպես այս աշխարհում երեխայի *առաջին սեփական տեղ*, այսինքն՝ նրա *անձնական տարածք*: Այդ տարածքը հայոց մեջ հայտնի է *մանկասենյակ*, *մանկանոց* բնորոշումներով:

Մանկանոցի պատկերավոր նկարագրությանն ենք հանդիպում Նինա Գրունֆելդի գրքում. *«Մանկանոցը պետք է լինի լուսավոր և լայն՝ վերևից և ներքևից բացվող պարտահաններով: ...Հոգնած դայակի համար լավագույն դարմանը մեծ բազմոցն է, և երեխաները կարող են այն օգտագործել որպես նստի»*⁹:

Մեր դիտարկմամբ՝ նավը ընկալվում է որպես շարժում, տատանում, տարրերում, որը հատուկ է օրոցին:

Մանկանոց բառը հայերենի համագործածական բառապաշարում լայն կիրառություն չունի. այդ բառի հոմանիշային հարացույցից առավել կիրառելի է *մանկասենյակ* բառը: Պատճառներից մեկը թերևս *որբանոց*, *ծերանոց* բառերի հետ ունեցած իմաստաաճանցային առնչությունն է, բացասական երանգի ընկալումը:

Հրաչյա Աճառյանը ներկայացնում է *անոց* բառակազմական մասնիկի զանազան նշանակությունները: Մեջբերենք մեզ հուզող հարցի տեսանկյունից երկուսը.

1. *տեղ, վայր, օրինակ՝ փայտանոց, գործանոց,*

2. *գիրք կամ մատյան, օրինակ՝ շարակնոց, գործոց (առաքելոց)*¹⁰:

Ըստ վերոնշյալ բնութագրի՝ մանկանոցը կարող ենք բնորոշել որպես մանուկներին հատկացվող տարածք: *Մանկանոց* բառամիավորը գրական տարածքում ունի նուրբ թափանցում: Մեջբերենք մի հատված հեքիաթագետ

⁷ Թերլեմեզյան 1941, 63:

⁸ Осорина 1999, 15:

⁹ Grunfeld 1991, 40:

¹⁰ Աճառյան 2005, 12:

Ա. Զիվանյանի գիտական հաղորդումից. «*Ձմեռը մանկանոցի տիրություն կարևոր տեղ է զբաղեցնում. տարվա ոչ մի եղանակային դրսևորում այնքան դյուրությամբ մանուկների խաղի առարկա չի դառնում, որքան ձյունը, իսկ ձմեռային տոները նրանց համար մի առանձին գրավչություն ու հանդիսավորություն ունեն (ընդգծումը մերն է)*»¹¹:

Նշենք նաև այն, որ Օշականում կա «Մանկանոց» անվամբ եկեղեցի: «Օշական» գրքում նշվում է. «Օշականի հարավային կողմում Շաղվերդ գետից քիչ վերև, կառուցված է «Սուրբ Սիոն» կամ «Մանկանոց» կոչվող եկեղեցին: Ամեն տարի Սուրբ Սիոն եկեղեցում Քառասուն մանկանոց տոնի օրը տեղի է ունենում ժամերգություն և ձերթի օրհնության կարգ»¹²:

Օրորոցը, օրորոցայինը նախևառաջ դաստիարակություն է: Շիրակում տարածված են՝ «*Էրեխեն օրոցքի մեջ է բայլու (կերևա)..., էրեխուն փոքրուց բղի դաստիարակես*» արտահայտությունները:

Ահա մի հատված Հրանտ Մաթևոսյանի «Միամիտ պատմությունից».

«-Օրորի՛ր, օրորի՛ր...- օրորոցի մոտ կանգնեց, մրաճեց ասել՝ ... տեսնես մարդ է դառնալու, թե ...»¹³:

Օրորոցը պատմական հիշողություն է. շատ անգամ բանասացները օրորոցային երգ չեն հիշում, բայց ամենայն մանրամասնությամբ նկարագրում են իրենց երեխայի օրորոցը: Ուշագրավ է, որ մեզ հանդիպած ամենատարեց բանասացը նկարագրում էր օրորոցի տեսքը. «*Օրորոցն անվանել են նաև թորոց: Այն ունեցել է նախշազարդ գլխամաս և ուրնամաս, իսկ երկու կողմերից եղել են զուգահեռ ձևավոր ձողեր: Ներքևից ունեցել է կիսակլոր աղեղաձև ուրքեր, որոնց վրա հեշտ է եղել օրորել: Եղել է նաև օրորոցի մեկ այլ տեսակ՝ յուլկա, որն ունեցել է կայուն գլխամաս և ուրնամաս: Օրորվել է միայն միջնամասը*»¹⁴:

Մեկ այլ բանասաց նշում է. «*Օրորոցը փայտից, վերևի և ներքևի մասերը կիսակլոր, իրար միացված էր փայտով, որից կախում էին վարագույր կամ տիկնիկ, երկու կողմերից՝ թելեր, որոնցով օրորոցը ճռճվում էր: Ներսում դռակի մեջ խոր էին լցնում, իսկ վրան՝ բամբակ: Երկու փաթեթների արանքում լցնում էին արևի տակ խարկված հող որպես տակդիր*»: Իսկ այն հարցին, թե ինչու են երեխային քնեցրել օրոցքի մեջ, բանասացն ընդգծեց. «*Օրորոցի մեջ երեխան ավելի հանգիստ կքնի: Քնեցնելիս երեխային բարորոքում էին, դրա հետ մեկտեղ կապում, որպեսզի օրորելու ժամանակ երեխան վայր չընկնի*»¹⁵:

Օրորոց բառանունով կազմված վերաիմաստավորված կառույցներ

Օրորոցի ու երեխայի փոխհարաբերությունն արտահայտվում է ինչպես միջտեքստային, այնպես էլ միջժանրային (առած-ասացվածք) մակարդակում:

¹¹ Զիվանյան 2016, 142:

¹² Հովհաննիսյան 2014, 46:

¹³ Մաթևոսյան 1967, 152:

¹⁴ Շամխորի շրջան, Բարս գյուղ, հաղորդեց՝ Սիրանուշ Չոբանյանը (ծնվ. 1918 թ.):

¹⁵ Վրաստան, գյուղ՝ Կարմիր, Հովհաննիսյան Աղելինա (ծնվ. 1954 թ.): Նախնիները գաղթել են Մուշից: Կրթությունը՝ միջին մասնագիտական /հաշվապահ:

Հատկանշական է, որ *օրորոց* անվանաբառով առաձևերը փոքր-ինչ տարբեր են աղջիկ-տղա սեռային տրոհման առնչությամբ. «Աղջիկը *ոսկի օրորոցով* չդառնա ուր հոր տուն», «Աղջիկը *ոսկե օրորոցով* հոր տունը չի նստի», «Տղին դալիպն (կաղապար) *օրոցքն* ա»¹⁶: «Լավ ձագը ձվումը կերևա, / Լավ տղեն՝ *օրորոցումը*»¹⁷:

Ոսկի օրոցքը դառնում է բանաձև. բանահյուսական և հեղինակային օրորներում այս բառակապակցությունը գերադաս անդամ է.¹⁸ *Օրոր, օրոր քուն ունիս, / Պեշիկին մեջ քուն ունիս, Օսկիե օրքան ունիս, / Մարգարե յորդան ունիս...*

Նշենք Ավ. Իսահակյանի հետևյալ բանաստեղծությունը. «*Բալես ունի հնդու-մարա, / Ոսկի օրոցք, արլաս ծածկոցք, / Պուպո՛շ դարդար, նրխշուն բալա, / Պաճիկ կենես... օր-որ, լա, լա, / Նանիկ կենես, նանի~, դար-դար. / Աչքդ ու ունքդ-աստղ ու կամար*»¹⁹:

Օրորոց բառի ուղղակի իմաստից փոխաբերականին անցումը թույլ է տալիս ենթադրելու այդ բառի իմաստային դաշտի ընդգրկունությունը: Հայ դարձվածաբանական մտածողության մեջ գերակա իմաստը խարսխվում է նախնականի վրա և միաժամանակ ծավալվում է՝ ստանալով մետաֆորային նշանակություն, այսպիսով՝ տարամիտվելով սկզբնական իմաստից.

*Օրորոցի մեջ խեղդել, իր օրորոցում խեղդել*²⁰- սկզբնավորվելու պահին իսկ առաջն առնել, արգելել, խափանել:

Ընդգծենք, որ օրհնանքներում ու անեծքներում *օրորոց/օրոցք* բաղադրիչը տարածված է, որն ըստ էության պայմանավորված է օրորոցում գտնվող անմեղ էակին օրհնելու կամ անիծելու ցանկությամբ: Շիրակում տարածված են եղել հետևյալ խոսքերը. *դանդ օրոցքը միշտ լիքն էղնի, օրոցքի մեջ լիքը էրեխա էղնի կամ ծովի, դանդ օրոցքը միշտ ճոճվի կամ ճոճա, Աստու աչքը միշտ էրեխո օրոցքի վրա էղնի (օրհնանք), օրոցքի երես չտեսնիք, քունդ օրորոց չդրվի, օրորոցի ձեն չլսես (անեծք)*:

Որպես կշտամբանքի խոսք՝ մեջբերենք *օրոցք* բաղադրիչով կազմված հեղինակային մտածողության դրսևորման մի նմուշ. «*Կալը երեսի վրա թողնել կարելի չէ: Ո՛վ պիտի աշխատի նրանց տեղը: Ամեն մարդ զբաղված է, գլուխ քոքելու ժամանակ չունեն: Գեղացու մեռնել-ապրելու օրերն են: Իրանք էլ միջոց չունեն մշակ բռնելու. ուզենան-չուզենան պիտի աշխատեն: Չունենոր մարդու օրոցքը կոտրի, լացի համար էլ ժամանակ չունի*»²¹:

Շիրակում կենցաղավարում են նաև հետևյալ խոսքերը. *գյուղացու օրոցքը կտրվի*, որը հավասազոր է *աշխատավորի օրը կտրվի*, *աղքատի օրը կտրվի* բանաձևային արտահայտություններին:

¹⁶ Ղանալանյան 1960, 65:

¹⁷ Հարությունյան 2004, 86:

¹⁸ Գրիգորյան 1970, 53:

¹⁹ Իսահակյան 1987, 7:

²⁰ Աղայան 1976, 1600:

²¹ Իսահակյան, 1959, 252:

Օրորելը՝ որպես օրորոցային տեքստի նախադրյալ

Օրորոցային երգերի մոգական միջոցը ռիթմն է, որը ձևավորվում է հրումով և օրոցքի ինքնաբերական վերադարձով: Այդ հրում-վերադարձերի արդյունքում է առաջանում որոշակի լիցք, և օրոցքը սկսում է ետ ու առաջ անել: Ըստ վաղնջական պատկերացումների՝ հենց այդ տիեզերական լիցքն է երեխայի մեծանալու պատճառը²²: Որոշ մշակույթներում հայտնի են սնահավատքի ձևեր՝ դատարկ օրորոցին առնչվող:

Թումանյանն ընտանիքի անդրանիկ երեխան էր: Տանը շատ են սիրել նրան: Մայրն ասում էր. «Գիշեր-ցերեկ ձեռներիս ենք պահել ես ու իմ սկեսուրը: Օրորոց չենք դրել, ոչ էլ ճոճի մեջ, որ միտքը պայծառ մնա, չօրորվի»²³:

Շոտլանդիայի տարբեր մասերում հավատում են, որ եթե օրոցքը դատարկ օրորեն, շատ երեխաներ կունենան.

*If you rock the cradle empty
Then you shall have babies plenty.*²⁴

Մինչդեռ հայ իրականությունում *դատարկ օրորոց օրորելը* համարվել է վատ նշան:

Ըստ շոտլանդական ավանդույթի՝ երեխային երբեք չէին դնում նոր օրոցքի մեջ, քանի որ նորածնի համար անհաջողակ կլիներ: Նախապես աքաղաղ կամ հավ էին դնում օրոցքի մեջ²⁵:

Ուշագրավ է վարպետ Վանո Դադոյանի դիտարկումը. «Տարբեր տիպի օրորոցներ կան, որոնց ճոճորումները տարանում են, տեղափոխում են, իսկ մեզ մոտ այդպես չէ: Մեր օրորոցը ճոճվում է՝ ուղղակի ցույց տալով, որ երեխայի մոտ մարդ կա»²⁶:

Հայկազյան բառարանում «որրան, որրան, որրոց, օրոց, օրորան» բառերն են հիշատակվում *որպես թե երերան, կամ օրոր երգով քնարան, ննջարան նորածին տղայոց՝ շարժուն, որոյ երերմամբ ի քուն երթայ մանուկն*»²⁷:

Օրոցքի տարրուբերումը, ռիթմիկ տատանումը նման է խնոցի (ձնում) հարելու շարժումներին: Մեզ հաջողվել է գտնել մանկական բանահյուսական տեքստ, որում զուգադրված են *ձնում* և *օրորոց* բառերը, անշուշտ որոշակի համաբանության հիմքով. «Հա՛յ ձցում, հա՛յ ձցում, / Շալկե՛մ սարեր անցրցում, / Հա՛յ ձցում, հա՛յ ձցում, / Շալկե՛մ դաշտեր պտուցում, / Հա՛յ ձցում, հա՛յ ձցում, / Շալկե՛մ գետեր անցկրցում»²⁸: «Հա՛յ ձցում, հա՛յ ձցում, / Մածոն ու կաթ կերցրցում, / Հա՛յ ձցում, հա՛յ ձցում, / Բմփոքրիկին մեծրցում, / Հա՛յ ձցում, հա՛յ ձցում, / Ականջ քաշե՛մ երկրնցում, / **Օրորոցում** քեզ քընցում, / Քեռակնկալ կոռլին քնցում, / Տալուր գոգը նստցում»²⁹:

²² Միմոնյան-Մելիքյան 2007, 127:

²³ Թումանյան 1983, 22:

²⁴ Bennett 1992, 74.

²⁵ Bennett 1992, 31.

²⁶ Թաթյան 2014:

²⁷ Նոր Բաղդիք Հայկազեան Լեզուի 1836, 536:

²⁸ Գրիգորյան 1970, 177:

²⁹ Գրիգորյան 1970, 178:

Բանահավաքչական աշխատանքներ կատարելու ժամանակ ականատես ենք եղել ձնում մանկախաղի կատարմանը, որն ուղեկցվում էր պարբերաբար կատարվող շարժումներով (ընտանիքի մեծ մայրը կամ մեծ հայրը բռնում էր փոքրիկ երեխայի ձեռքերից, դնում մեջքին և *ձձում*, *ձձում*, *հա ձձում* տեքստի արտաբերումով օրորոցի շարժման նման տարուբերում էր):

Խնոցու երգը՝ «*Հա՛ ձցում, հա՛ ձցում*» բնորոշմամբ, թափանցել է մանկական բանահյուսության տիրույթ. ենթադրաբար խաղ կապողը աշխատանքի նկատմամբ սեր է սերմանում. «Ծծյու՛մ-կարա՛ք, ծծյու՛մ-կարա՛ք, / Շատ էլի, շոտ էլի, / Տղես ուտի, էրթա քյաղաք, / Կռան զանի, խացխան շինի, / Պիրի՛ մեր տաշտ քերենք»³⁰:

Օրորոցային բազմաթիվ տեքստերում օրոր երգողը օրորոցկանին է դիմում, նախապատրաստում կյանքի դժվարություններին: Մեջբերենք ավանդական օրորի տեքստից մի պատառ. «*Օրոր ըսիմ քնացիր, / Մըշինկ-մըշինկ քընացիր, / Ճամփան երկար մի գիրարար, / Որ չխոսվի սիրտդ արթար*»³¹:

Օրորոց / օրոցք բառային միավորներն աղերս ունեն *հայրենիք, օրրան, օջախ* բառերի հետ: *Օրոցք դնեմ* արտահայտությունն ուշագրավ դրսևորում ունի Հովհաննես Շիրազի բանաստեղծական աշխարհում.

*Դեռ մի կարոյր ունեմ անհագ՝ հասնեմ Անի ու նոր մեռնեմ,
Բանամ ճամփիս դռները փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:
Բալասանվեմ իր բաց վերքին, մանուկ ծնեմ մեռած մորից՝
Ախուրյանի օրորի փակ, փրկեմ Անին՝ կարոյրս առնեմ:
Օրոցք դնեմ իդձերն հայոց՝ հայոց հույսերն օրորելով,
Որպես որդուն իմ երկվորյակ՝ երկնեմ Անին՝ կյանքն օրորեմ»³²:*

Ըստ էության, բնությունն էլ կարող է օրոր երգել: Հ. Շիրազը ազգային սիմվոլիկա է օգտագործում. հայրենիքի համար է օրոր երգում.

*Ախուրյանն է քեզ մայրական օրոր,
Շիրակն օրոցք՝ մանուկ ես դու, Անի...»³³*

Եզրակացություններ

«Օրորոց» հասկացությունը առաջնային պլանում խարսխվում է օրորերգին: Օրորոցայիններն առնչվում են մարդկության բնօրրանի գաղափարին, և ընդգրկուն իմաստով տարաբնույթ մշակույթներում օրորոցայինները գրեթե նույն իմաստային շերտն են պարունակում: Թվում է՝ դրանք երգվել են ոչ միայն երեխային հանդարտեցնելու, քնեցնելու, այլև ժողովրդական բառը ու բանը, կենցաղն ու բարքերը, ժողովրդական հավատալիքները, լեզվամտածողությունը փոխանցելու համար (քնեցնելու գործառնությունն զուգընթաց):

Ժամանակի հոլովությամբ *օրորոց* հասկացության շուրջ հյուսվել են վերահիմնաստավորված արտահայտություններ՝ դարձվածքներ և առածներ:

³⁰ Գրիգորյան 1970, 182:

³¹ Գրիգորյան 1970, 89:

³² Շիրազ 2011, 305:

³³ Շիրազ 2011, 307:

Վերջինս պայմանավորված է նշյալ բառի վերինաստային առանձնահատկություններով ու իմաստային ծավալմամբ:

Հայկական լեզվամշակութային մտածողության մեջ օրորոցը ընկալվում է իմաստային տարողունակ շերտերով՝ օրորոց հասկացության անձնական ընկալումից մինչև վերանձնական:

Օրորոց բառանունը բանահյուսական գրեթե բոլոր ժանրերում կենսունակ է. մարդու կենսատարածքը սկսվում է օրոցքից, մեր ինքնությունը ձևավորվում է օրոցքի ու օրորոցայինի միջավայրում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բառարաններ և սկզբնաղբյուրներ

ԱՂԱՅԱՆ 1976

Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, «Հայաստան», 1976:

ԱՃԱՌԵԱՆ 1926

Աճառեան Հ. Յ., Հայերեն արևմտական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1926:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ 1981

Գույումճեան Մ. Կ., Ընդարձակ Բառարան Անգլիերենէ Հայերեն, Պէյրոյթ, Կ. Տօնիկեան և Եղբայրք, 1981:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2004

Հարությունյան Ս. Բ., Աստղին լսող է պետք (հայկական առածներ և ասացվածքներ), Երևան, «Արևիկ», 2004:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 1960

Ղանալանյան Ա. Տ., Առածանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1960:

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ 1836

Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, հ. 2, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 1967

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

Ուսումնասիրություններ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1970

Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ 1941

Թերլեմեզյան Լ., Կոմիտաս. հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, Պետական հրատ., 1941:

ԹՈՒՄՆԱՅԱՆ 1983

Թումանյան Ն., Թումանյանի մանկությունը, Երևան, «Սովետական գրող», 1983:

ԻՍԱՀԱԿՅԱՆ 1987

Իսահակյան Ա., Երկեր (կազմ. և վերջ. գրեց Ավիկ Իսահակյանը), Երևան, «Սովետական գրող», 1987:

ԻՍԱՀԱԿՅԱՆ

Իսահակյան Ա., Երկեր չորս հատորով, հ. երրորդ, Երևան, Հայպետհրատ, 1959:

ԼԱԼԱՅԵԱՆ 1910

Լալայեան Ե. Ա., Վասպուրական, Ազգագրություն // Ազգագրական հանդէս, XX գիրք, համար 2, 1910, 116-196:

ՄԱԹԵՒՈՍՅԱՆ 1967

Մաթևոսյան Հր., Օգոստոս, Երևան, «Հայաստան», 1967:

ՇԻՐԱԶ 2011

Շիրազ Հ., Անի պոեմ, կազմ.՝ Ա. Կարապետյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2011:

ՄԻՄՈՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ 2007

Միմոնյան- Մելիքյան Լ., Տոմարային ծիսաշար (h. 1-2), h. 2, Երևան, «ՎՍՎ Պրինտ», 2007:

ՐԱՖՖԻ 1962

Րաֆֆի (Հակոբ Մելիք Հակոբյան), Երկերի ժողովածու, h. 1, Երևան, Հայ-պետհրատ, 1962:

ՐԱՖՖԻ 1963

Րաֆֆի (Հակոբ Մելիք Հակոբյան), Երկերի ժողովածու, h. 7, Երևան, Հայ-պետհրատ, 1963:

ОСОРИНА 1999

Осорина М.В., Секретный мир детей, Санкт-Петербург, «Питер», 1999:

BENNETT 1992

Bennett M., Scottish Customs: from the Cradle to the Grave, Birlinn, Edinburgh, 1992.

GRUNFELD 1991

Grunfeld N. A Miscellany of Mother's Wisdom, Harper Collins Publishers, Printed in Hong Kong (by Jackson Day Jennings Ltd/Inklink), 1991.

Համացանցային աղբյուրներ

ԹԱՐՅԱՆ 2014

Թարյան Մ., «Նենի ըսիմ, քնցիմ որդի, նենի, նենի». Հին հայկական օրորոցն ու օրորոցայինները, URL: <https://www.panorama.am/am/news/2014/03/13/armenian-cradle/333217>, դիտումը՝ 25.04.2020/

Hasmik H. Matikyan

Shirak Center for Armenological Studies

Shirak State University

LINGUO-CULTURAL MANIFESTATIONS OF THE CONCEPT "CRADLE" IN THE ARMENIAN REALITY

Keywords: cradle, language, culture, lullaby, picture, narrator, text.

The cradle, as an important component of the nursery, has a unique description in folk and literary works. Within the frameworks of the research, we presented the fictional and real image of the cradle in the context of lullaby texts. The concept of the “cradle” is closely related to the genre of lullaby. Sometimes words “cradle” and “lullaby” in folk lullabies have the same semantic content. Linguistic analysis of the word “cradle” allows us to highlight and reveal its linguistic and cultural peculiarities, which are manifested at different folklore levels.

It is obvious that the lullabies were sung not only to calm the child, to put him/her to sleep, but also to convey the folk mentality, the way of life and customs, folk

beliefs, language thinking (along with the function of putting him/her to sleep).

Many phrases and proverbs have been created around the concept “cradle” throughout history, due to the meta-semantic characteristics and semantic growth of the mentioned word.

In the Armenian linguistic and cultural thinking, the cradle is perceived with layers of meaning, from the personal perception to the suprapersonal level.

Moreover, the word “cradle” is viable in almost all genres of folklore; our identity is formed in the environment of the cradle and the lullaby song.

Асмик Гамлетовна Матикян

Ширакский центр арменоведческих исследований

Ширакский государственный университет

ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ПРОЯВЛЕНИЯ КОЛЫБЕЛИ В АРМЯНСКОЙ РЕАЛЬНОСТИ

Ключевые слова: колыбель, язык, культура, колыбельная, картина, нарратор, текст.

Колыбель как принадлежность ребенка имеет уникальное описание в традиционных и литературных произведениях. В рамках статьи мы представили образ колыбели (люльки), проведя лингвистические исследования, а также рассмотрели колыбель в контексте колыбельных песен.

Понятие «колыбель» тесно связано с жанром колыбельной. Иногда в народных колыбельных текстах слова «колыбель» и «колыбельная песня» имеют одинаковое смысловое содержание. Лингвистический анализ слова «колыбель» позволяет выделить и раскрыть его языковые и культурные особенности, проявляющиеся на разных фольклорных уровнях.

Очевидно, что колыбельные песни исполнялись не только для того, чтобы успокоить ребенка, убаюкать его, но с целью передачи народного менталитета, быта и обычаев, народных верований, языкового мышления.

Вокруг понятия «колыбель» в ходе истории создавались фразы и пословицы: последнее обусловлено метасемантической характеристикой и семантическим ростом упомянутого слова.

В армянском лингвокультурологическом мышлении колыбель воспринимается смысловыми пластами, от личностного восприятия до надличностного уровня.

Более того, слово «колыбель» уместно почти во всех жанрах фольклора: наша идентичность формируется в среде колыбели и колыбельной песни.

Ներկայացվել է՝ 23.10.2022,
գրախոսվել է՝ 14.11.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023: